



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

01 փետրվարի 2014թ

թիվ 85-Ն

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 290-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետով՝

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի գծով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով հաստատված հատկացումների գումարիների՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների վերաբաշխումների, ինչպես նաև բյուջետային հատկացումների հաշվին պետական կարիքների համար գնումների անվանացանկում, բյուջետային հատկացումների վերաբաշխումներով չպայմանավորված, փոփոխությունների և լրացումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 290-Ն հրամանի (այսուհետ՝ Հրամանի) հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի գծով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով հաստատված հատկացումների գումարիների՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

ՖՆ 000417

վերաբաշխումների, ինչպես նաև բյուջետային հատկացումների հաշվին պետական կարիքների համար գնումների անվանացանկում, բյուջետային հատկացումների վերաբաշխումներով չպայմանավորված, փոփոխությունների և լրացումների իրականացման» կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրաման օրինակելի Ձև N 1-Հ Մաս 2-ը, Ձև N 1-ԾՎ Մաս 2-ը և Ձև N 2-ՄԾՎ Մաս 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի, Հավելված 2-ի և Հավելված 3-ի:

2) Ուժը կորցրած ճանաչել Կարգի 3.3 կետի գ) ենթակետի 1-ին պարբերությունը, օրինակելի Ձև N 1-ՀԳ և Ձև N 1-ԾԳ:

3) Կարգի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«10. Վերաբաշխումներով չպայմանավորված հանգամանքներով գնումների անվանացանկում կատարվող փոփոխությունները իրականացվում են ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի N 896-Ն հրամանով սահմանված կարգով:»:

4) Ուժը կորցրած ճանաչել Կարգի 11-17-րդ կետերը:

5) Կարգի 18-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«18. Վերաբաշխում կատարելիս Ձև N 1-Հ Մաս 2-ի 18-րդ սյունակը, Ձև N 1-ԾՎ Մաս 2-ի 13-րդ սյունակը և Ձև N 2-ՄԾՎ Մաս 2-ի 13-րդ սյունակը լրացնելիս գնման ձևը նշել հետևյալ եղանակով՝ եթե պայմանագիրը կնքվելու է՝

1) շրջանակային համաձայնագրով, ապա նշվում են «ՇՀ» տառերը,

2) բաց ընթացակարգով՝ «ԲԸ» տառերը,

3) պարզեցված ընթացակարգով՝ «ՊԸ» տառերը,

4) սահմանափակ ընթացակարգով՝ «ՍԸ» տառերը,

5) մրցակցային երկխոսության կիրառմամբ՝ «ՄԵ» տառերը,

6) բանակցային ընթացակարգով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու՝ «ԲԸԱՀ» տառերը,

